

ԳԵՂՈՆ ՀԱՅ ԼԵՁՈՒԻՆ

Ձօն առ երջանկայիշատակ Մը-
խիթար Արարհայր՝ որուն հայ
լեզուին մատուցած բարեքը ան-
փոխարինելի եղաւ։

Մ. Ա.

Ո՛վ հայ լեզուս իմ մայրենի,
Սօսեաց անտա՛ն դուն երգասաց,
Արեւարդը սո՛ւրբ մեղեդի՛
Ձոր բարբառեց նախ ի՛նքն՝ Աստուած...:

Քրեմա՛ր սիրոյ դուն ներդաշնակ
Ոսկեհնչիւն լա՛ր տաղերգու,
Սրտի տրոփիւն, բերնի գգուսն,
Բիրեղաճայն հայո՛ց լեզու...:

Մեր շրթներուն վրայ ծաղկած
Դուն սիրագեղ, անոյշ բարեւ,
Ականջներուն մէջ՝ քերթւած,
Սրտերուն խոր՝ ջերմիկ արեւ...:

Շո՛ղ խրատացեալ, լոյսի կոհակ,
Խոր արձագանգ բիւր դարերու,
Ջրվիժային անմահ նըւագ,
Յաղքերգ, սիրերգ, դուն հա՛յ լեզու...:

Երէկ տրտու՛նջ էիր տըկար,
Հայ պանդուխտին հեծֆը գաղտնի,
Այսօր՝ մըռու՛նջ արիաբար
Ու ծագէ ծագ որո՛տ շանքի...:

Քու մըմունջով ողբերգական
Հայ մամիկն իր սուգը հըծծեց,
Մինչ արդ շունչովդ պողպատաճայն՝
Հայ ռազմիկին գե՛նքն ես անշէջ...:

Երբեմն հըծծի՛ւն էիր ցաւի,
Բարբարոսին նետին քիւրախ.
Հիմա ճողփի՛ւն ջինջ ու ծաւի
Ձուլալ ջուրի պէս կենսուրախ...:

Հայ մանուկին շրթներուն վրայ՝
Մօր կաթին հետ հոսէ՛ անեղծ
Ու գերք մասո՛ւնք հոգեհրմայ՝
Դի՛ր հոն խորհուրդդ աստեղամերձ...:

Վարուժաններ ու Բաֆֆիններ
Թող բիրեղներն իրենց մտքին՝
Ծաղիկներու այս այգաջեր՝
Բանան անուն մատաղ սրտին:

Ո՛վ հայ լեզու, հո՛ւնջ կենսալիր,
Խայտա՛ սիրով, խայտա՛ անվերջ,
Հայն ըսփիւտի՛ իր տարագիր
Կարօտն օժէ՛ քո՛ւ շեշտիդ մէջ:

Ու քող խօսնակն երեւակի
Քու հարազատ բաւերով հեշտ,
Ձորս ծագերուն տարաշխարհի
Յաղքանակներ քուէ անվերջ:

Ու հոռովէ՛լն հայ մըշակին
Ի՛ր խակ սրտի ախօսներուն
Յանէ՛ յոյգեր արեգնային՝
Քու շեշտերուդ բերքով բեղուն...:

Մեհեաններէն դիցաբնակ,
Մինչեւ ի վա՛նք ճգնաւորի,
Սագին քելով հեշտանըւագ՝
Սայաքնովու կամ Քուչակի,

Կամ քրեարով երգչին Գողթան,
Բամբուներով, փողով ցնծուն,
Թնդիւններով շեփորաճայն
Կամ Նարեկի հեծֆով օժուն՝

Թրքաւ՝, քրքաւ՝, քրքաւ՝ յաւէ՛տ,
Ջրվիժային ո՛ւժ դաշներգու,
Բի՛ւր դարերու քաւային հետ
Հնչէ՛ անվերջ, անմահ լեզու...:

ՄԱՌԻ ԱԹՄԱՃԵԱՆ

25 - 1 - 1950 Փարիզ

ԳԹԱՅԷՔ ԱՆՈՆՅ

Այս մութ ճամբուն նեղ անկիւնին՝ գրկապինդ
Հէք երկուորեակ մանուկներ
Աղքատութեան բարձին վրայ՝
Մեռան հօթի, պաղ քարերը լըզելէն:
Անոնց դէմքին, անոնց ալ մութ աչքերուն՝
Վերջալոյսի երանգն անգամ չըմընաց.
Հովերէն պաղ այս ձմեռուան հառաչին
Կը թըրթըռան բաց աչքերնուն թարթիչներն:
Ո՛հ, զըթացէք...

Կ'անցնին անկէ անայլայլ
Մուշտակներու մէջ տաքուկ
Կընդիկներ լուռ՝ ժրպտելէն.
Կ'անցնին ծերեր, պարմաններ
Դէպի կըռիւն հէք կեանքին.
Չեն նայիր թէ այդտեղ իրենց ոտքերուն՝
Արշալոյսներ են մարեր:
Ո՛հ, զըթացէք...

Ձայնը մեռնող պառաւին
Երկարեցաւ պատերուն մէջ ծերպերէն ներս
Գըռներուն:

Ո՛հ, զըթացէք...

Ու անցորդին սիրտը դարձեալ միշտ խաղաղ
Չառաւ կայծ մ'իսկ զըթուլեան:

Ո՛հ, զըթացէք, զըթացէք...

Ո՛վ բընութիւն, դուն որ կ'ոռնաս սարերուն,
Հովիւներուն, դաշտերուն

Քըղանցքին վրայ լեռներուն
Այս իրիկուն, թող ես հոգիդ, թող ես քու
կեանքդ ըլլամ
Այս մարդկութիւնն գինիին մէջ ալ արբէր
Կ'երգէ անփոյթ, ցաւագար:
Թող սըրտերուն մէջ մարած
Կանթեղները կանթեղները ես փըշրեմ
Եւ մեռնողին՝ որ դեռ ունի կայծ մը հին,
Անեմ գընեմ սըրտիս վրայ՝ վառեմ պատրոյզը
Խըղճիս.

Ես, կը գըթամ...

Ըլլամ յաւէտ սայլը քըշող միշտ տըխուր
Մեռելատարն այս գիշեր...
Մարդը մերժեց շարժել դիակն աղքատին
Ճամբուն վըրայ, խըծիթներուն, անսքնար
Մեռածներն այդ խոնաւութեամբ նեխեցան:

ՊԱՏՄԱԿԱՆ

ՍԵԼՃՈՒՔԵԱՆ ԹՈՒՐՔԵՐՈՒ

ԱՐՇԱՒԱՆՔԸ

(Շար. Բազմ. 1950. Թիւ 1-2, էջ 14)

ԻԲՐԱՀԻՄԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ

Տուղրիլ-բէկը մոռցած էր թէ Հայոց
աշխարհը «անտէր» ու «անպաշտպան» է,
անկէ միանգամ ընդ միշտ դուրս քշելու
Յոյները, որոնց դէմ վրէժի նոր առիթ մը
ներկայացեր էր, Անի քաղաքին եւ Իրե-
րիոյ կուսակալը Քատաքալուն Քեքոմէ-
նոս, զոր հայ պատմագիրները կամենա-
կը կոչեն, ուղեր էր, 1048-ին, բիւզանդա-
կան բազուկին ուժը ցոյց տալ Սելճուք
թուրքերու ձիաւորներու գունդի մը, որ
կը պատերազմէր իր սեփական շահին հա-
մար, իբր առաջապահ գունդ Սելճուքնե-
մար պաշտօնական տիրապետութեան: Ի-
րու պաշտօնական տիրապետութեան անա-
բերիոյ «դուքսը», որ բիւզանդական անա-
բի զօրավարներուն մէջէն կը փայլէր իր
զինուորական տաղանդով, իրեն օգնու-
թեան կանչելով Բուլղար Ահարոն, Վաս-
պուրականի կուսակալը, ռազմադիտական
ճարտար դարձուածքով մը յաջողեր էին

Թող տուր ինձի, ո՛վ բընութիւն մըրըկոտ,
Հողը ըլլամ ես անոնց
Մէջըս թաղուին, քանի չունին անկիւն մը այս
աշխարհին.

Գուցէ անոնց դիերով
Հոգիս ասի, մագիլ մ'ըլլայ արծիւի
Որ սըրտերուն այդ դժնէ
Երակները ճանկուտէ
Արիւնտէ գայրագին:
Ձի կը լըսեմ ես կըրկին
Ճամբուն վըրայ, մեռելներուն շրթներէն՝
Ո՛հ, զըթացէք. եթէ հացը մերժեցիք
Հող մը գոնէ մեզ տըլէք:

Ե. ՆԱՏԻՐԵԱՆ

Օգոստոս 1949.

Ջախջախել թրքական գունդը, Մեծ-Չաբի
գետին ափերուն վրայ, որ այդ կողմէն
Վասպուրականի սահմանը կը կազմէ:
Գունդին մնացորդները փախան դէպի լեռ-
ներու ուղղութեամբ բռնելու համար
Պարսկա-Հայաստանի ճամբան, որ այդ
ժամանակ խոյ գաւառն էր, Ուրմիոյ լի-
ճին հիւսիս-արեւմտեան կողմը:

Վրէժի հակահարուածը չուղացաւ:
Տուղրիլ-բէկ, որ կը պատրաստուէր Ի-
րազ-Աճէմին գրաւելու, 1049-ին աւելի
մեծ արշաւախումբ մը պատրաստեց, ո-
րուն հրամանատար կարգեց իր ընտանի-
քէն զօրավար մը, Իբրահիմ-Ինալ, իր
խորթ եղբայրը⁽¹⁶⁾, զոր հայ պատմագիր-
ները Արբէշ մը կը կոչեն⁽¹⁷⁾:

Առնելով արշաւանքին լուրը, Քատաքա-
լուն Քեքոմէնոս սպառազանքներու ժողովի
մը առջեւ բերաւ փրկարար առաջարկ մը,
որ էր, աղքեցիկ հակայարձակում մը սկը-
սիլ մուսուլման հողի վրայ, գործելով
փոխ-վրէժի աւերումներ, այդ կերպով
փակելու համար ասպատակողներուն ճամ-
բան, ինչպէս որ անոնք սովոր էին ընել
բան, ինչպէս որ անոնք սովոր էին ընել
քրիստոնեայ հողերու վրայ: Սակայն Բուլ-
ղար Ահարոն, հաւանօրէն ներքինացեալ
զար Ահարոն, հաւանօրէն ներքինացեալ

(16) Կարապետ Վարդապետ Շահնազարեանց.
Ծանօթութիւնք Բ. Հատ. Ստեփաննոս Օրբէլեանի
«Պատմութիւն Սիւնեաց», էջ 315:

(17) Ուսահայեցի, Մասն Ա. էջ 120:

մը, դէմ կեցաւ այդ գաղափարին, առաջարկելով ամբանալ բերդերու մէջ, բրոնզէնով պաշտպանողական դիրք: Բիւզանդացի երկու զօրավարները, զիտնալով իրենց զօնդերուն տկարութիւնը, օգնութեան կանչեր էին դաշնակից վրացիները, որոնց պիտի հրամայէր Լիպարիտ իշխանը: սերունդ Օրբէլեան տանը, աւելի հզօր վրաստանի մէջ, քան Բագրատ Գ. Թագաւորը: Օրբէլեան իշխանը, որ կ'ուզէր իր բերելիք օգնութիւնը սուղի ծախել, տեղէն չչարթեցաւ:

Երբ այս բանակցութիւնները կը կատարուէին, թուրքերը կ'անցնէին վասպուրականը եւ կը թափանցէին Բասեան գաւառին մէջ, հասնելով մինչեւ մեծ դաստակերտը, որ է՝ վաղարշաւան: Սարսափեցաւ հայ ժողովուրդը, տեսնելով տափաստաններու այս մարդիկ, «արոց երիվարք — կ'ըսէ ականատես Լաստիվերտցին — արագումն իբրեւ զվէմն հաստատումն, աղեղումն լարեալք, եւ սլաֆեալ նետք նոցա, գօտեւորեալք քաջապէս, եւ անլուծանելի ունելով զխրացս կօշկաց»⁽¹⁸⁾:

Իբրահիմ — Ինալի բանակը, որ յոյն պատմագիր Կեղրենոսի համեմատ՝ կը բաղկանար իբր հարիւր հազար քաջամարտիկներէ, որոնց մէջ կային նաեւ պարսիկներ⁽¹⁹⁾, «քանզեալ սպականեցին, — կ'ըսէ Լաստիվերտցին, — դաւառս քսան եւ չորս սրով եւ հրով եւ գերութեամբ»: ապա կը յաւելու. «Ողորմազին եւ բազում ողորոց արժանի է պատմութիւնս: Որք իբրեւ զառիւծս ընթացան, եւ իբրեւ կորդիակունս բազմաց դէշ դադանաց եւ թրոչնոց երկնից»⁽²⁰⁾: Արիւնով կշտացած եւ աւերով յափրացած՝ Տուղրիլ-բէկի հորդանները ետ դարձան:

Բայց անոնք տեսնելով, որ ոչ միայն վասպուրական հարուստ եւ արդաւանդ երկիր մըն էր, այլ նաեւ Հայաստանի բոլոր նահանգներն ալ, յափշտակութեան եւ կողոպուտի բաց դաշտեր էին, ուստի, պէտք էր միշտ ախորժակը սուր պահել: Եւ Լաստիվերտցին կը գրէ դարձեալ. «Շարժեալ միւսանդամ մըրուր դառնութեան լի բարկութեամբ ի տանէն Պարսից՝ ահազին ծփանօք, եւ եկեալ հեղաճ յընդարձակ դաշտն Բասենոյ եւ Կարնոյ»⁽²¹⁾: Այս տեղերէն, «հեղեղատին ցայտուկները» բռնեցին երկրին չորս անկիւնները, արեւմուտքէն՝ մինչեւ Խաղտեաց գաւառը, հիւսիսէն Սպեր եւ մինչեւ Տայոց եւ Արշարունեաց ամուր տեղերը, հարաւէն մինչեւ Տարօն, Հաշտենից գաւառները եւ Խորձենի անտառը⁽²²⁾: Անապատի այս գաղանները տասն եւ չորս օր կանգ առնելէ վերջ, ջուրերու հեղեղներուն պէս ծածկեցին լեռները եւ մացառուտ վայրերը:

Ահաւոր էր աղեղնաւոր եւ սուսերամարտիկ զինուորներուն բացած տեսարանը: Անոնք ոչ ծերերու խնայեցին, ոչ մանուկներու, ոչ կիներու, ապականելով ամէն ինչ: «Մեր քաղաքները, կ'ըսէ ականատես պատմիչը, աւերուած, տուները այրած, ապարանքները հրախառն եւ մոխրախառն, եւ արքունաչէն սրահները ածխեղացած: Մարդիկ հրապարակներու վրայ կոտորուած, կիները տուներէն գերի ելած, կաթնասուն տղաները քարի դարնուած, պատանիներու գեղեցիկ դէմքերը թառամած, կոյսերը հրապարակներու վրայ անարգանքով նետուած, երիտասարդները ծերերու առջեւ սրախողխող եղած. ծերերու պատուական ճերմակ մազերը արիւնշագաթ, եւ անոնց դիակները թաւալվոր կը շարժէին»⁽²³⁾:

ՍՄԲԱՏԱԲԵՐԴԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Ամէնէն սաստիկ կոտորածը տեղի ունեցաւ Սմբատարերդի առջեւ, Մանանդի գաւառին մէջ, բարձր լեռներու հովիտ, Դերջանի հարաւակողմը: Լեռնաբերդին մէջ փախեր ապաւիններ էին բազմաթիւ մարդիկ, տանելով իրենց հետ անթիւ տնասուններ: Թուրքերը մոլեղին թափով դիմեցին բերդին վրայ, կործանեցին անոր ամուրները, յարձակուժով տիրեցին բերդաքաղաքին, սուրէ անցուցին բոլոր փախըստականները⁽²⁴⁾: «Անոնք որ ձեռք ինկան, — կ'ըսէ ականատես պատմիչը, — սուրով սպաննեցին, անոնք որ ապառաժուտ տեղեր ամրացան՝ նետերով խոցելով՝ սատակեցին. անձաւին վրայ ելնող բազմութիւն մը՝ մեծամեծ քարերով ջարդեցին, անոնց թաւալվոր դիակները մէկմէկու վրայ դիզուելով՝ իբրեւ փայտահարներու կոյտեր՝ առջեւ կեցած ձորը լեցուցին»⁽²⁵⁾:

Երեկոյեան դէմ, հրոսները՝ աւարը, գերիները եւ սպանուածներէն կողոպտած իրեղէնները առնելով մեկնեցան ծխացող աւերակներէն, իրենց ետեւը թողնելով ողբերու արժանի տեսարան մը:

«Ասոց երբայկն ետքը, — կը գրէ ողբերգակ Լաստիվերտցին, — շատ խղիւղ տեսարան բացուեցաւ, աւելի սրտամալիկ քան առաջին տեսարանը: Վիրաւորուածներէն ոմանք դեռ կէս մը կեցողանի, լեզուին ծարաւէն ցամքած, տկար ձայնով մը իրենց ծարաւին հնար մը գտնելու կը քանային, բայց չկար մէկը որ ջուր տար: Ոմանք ալ սաստիկ վերք մը առած ու ձայններին կտրած՝ անդադար կը հեռային: Ոմանց վիզը կէս մը կտրուած ու կիսամեռ գետին ինկած՝ ցաւին սաստկութենէն կը հառաչէին եւ ոտքերին ձեռքերին գետին

կը զարնէին: Բայց ասոցմէ աւելի ահաւոր տեսարան մը կար, որ քարերն անգամ եւ անշունչ արարածները ողբի եւ հառաչանքի կը շարժէին. անգամ քշնամին գերիները փախաւէն հանելէն յետոյ, մանուկները ծնողներու գիրկէն յափշտակեցին եւ գետին զարկին. ինկածներէն ոմանք՝ քարի զարնուած չարաչար մեռած էին. ոմանց փոքր պայքած ու փորտափք դուրս բախուած: Իսկ ողջերէն չափահասները սողին անդին վազվզելով՝ արտասուալից աչքերով մայրերին կը փնտռէին, եւ լալու ձայնը լեռները կը քնդացնէր, բայց անոնք չկարենալով փախի, գետինն երեսը սողալով՝ կը ճչէին»⁽²⁶⁾:

ԱՐԾՆԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Սմբատարերդէն՝ թուրք եւ պարսիկ աղեղնաւորները եւ սուսերամարտիկները ուղղուեցան դէպի Արծն մեծ քաղաքը, որ կը գտնուէր Կարնոյ հիւսիս-արեւմուտքը: Արիւստակէս Լաստիվերտցին, որ ծնած էր Լաստիվարդ գիւղին մէջ, այդ մեծ քաղաքին սահմաններուն վրայ, կ'ըսէ թէ «Արծն հոյակապ եւ ականաւոր էր, նման նորահարս կնոջ, որ գեղեցիկ ու վայելուէ դէմքով եւ զարդերու պայծառութեամբ՝ աճէնուն ցանկալի կ'երեւէր»: Եւ ուրիշ տեղ մըն ալ կ'ըսէ. «Իբրեւ պատուական ահուք մը՝ մեր քաղաքը լուսազեղ պայծառութեամբ կը փայլէր բոլոր քաղաքներուն մէջ, բոլորովին գեղեցիկ, բոլորովին դարդարուն»⁽²⁷⁾:

Արդարեւ, օտար պատմիչներն ալ հիացումով կը խօսին Կարնոյ դաշտին այդ զլխաւոր քաղաքին վրայ, իբրեւ առաջնակարգ շահաստան քաղաք, որ կը պարուկանէր մեծ հարստութիւն: Բնակիչներուն թիւն էր աւելի քան 300 հազար⁽²⁸⁾, որոնց-

(18) Լաստիվերտցի, ԳԼ. ԺԱ. էջ 44:

(19) Տես Չամչեանի մէջ «Պատմ. Հայոց», Հատոր Բ. ԳԼ. ԽԲ. էջ 946:

(20) Լաստիվերտցի, անդ:

(21) Անդ:

(22) Անդ, էջ 46-47:

(23) Անդ, էջ 48:

(24) Անդ, էջ 50:

(25) Անդ:

(26) Անդ, ԳԼ. ԺԱ. էջ 91:

(27) Լաստիվերտցի, ԳԼ. ԺԲ. էջ 53:

(28) Չամչեան, «Պատմ. Հայոց», Հատոր Բ. ԳԼ. ԽԲ. էջ 948:

զօրքերը տեսան Լիպարիտի քաջութիւնը, սուրբ բերանը տուին զայն. անոնք Լիպարիտը թողին այլազգիներու մէջ, եւ փախան, որպէսզի նա քաջութեան անունը չըստանայ: Այս տեսարանին առջեւ, թշնամիները միարան ճակատեցան Վրաց զինուորներուն դէմ, եւ երբ պատերազմը սատկացաւ, եւ Լիպարիտ որպէս առիւծ կը դռնէր այլազգիներու մէջ, Վրացի զինուոր մը, որ Լիպարիտին ետեւը կեցած էր, թուրով կտրեց անոր ձիուն երկու ջիւղերը: Լիպարիտ ձիէն վար իջաւ, նստաւ դետին, ասպարին վրայ, դռնելով՝ թէ «Ես եմ Լիպարիտն»: Ասոր վրայ՝ թշնամիները Վրաց զինուորներէն շատերը կոտորեցին, եւ մնացածները փախուցին, իսկ Լիպարիտն ալ գերի բռնեցին⁽⁵⁸⁾:

Արիստակէս Լաստիվերտցին՝ տարբեր կերպով կը պատմէ Լիպարիտին դուրսը հանդիպած արկածը: Ժամանակակից հայ պատմագիրը՝ կ'ամբաստանէ կայսերականները, մատնանշելով անոնց անմիաբանութիւնը: «Պատերազմը խմբուելուն, կ'ըսէ նա, Բուլղարին որդին՝ իր դուռնով թիկունք դարձնելով՝ թշնամիներուն համարձակութիւն տուաւ, որ անոնք Լիպարիտն իր քաջ մարդերով պաշարեն, որոնցմէ ոմանք սպաննուեցան, եւ Լիպարիտի ձիուն ջիւղերը սուրով կտրելով՝ զինքը ձերբակալեցին»:

Մինչ Սիւնեցի պատմիչը՝ իր տոհմը պանծացնելու յայտնի դիտաւորութեամբ՝ Լիպարիտը կը ներկայացնէ «մարտիրոսական արիւնով» պատկուած նահատակ մը, անոր մարմինը փոխադրել տալով Կարս քաղաքը⁽⁵⁹⁾, միւս հայ պատմագիրները՝ աւելի անկողմնակալ եւ արժանահատ՝ Օրբէլեան զիւցադին հանդիպած աղէտը կը դնեն իրական շրջանակին մէջ:

(58) Ուսուցիչ: Անդ, էջ 126-127:

(59) Ստեփաննոս Օրբէլեան: Անդ, էջ 123:

(60) Լաստիվերտցի: Անդ, էջ 59:

ԼԻՊԱՐԻՏ ԵՒ ՏՈՒՂԻՒԼ

Այսպէս, Լաստիվերտցին, յետ ըսելու թէ «թշնամիները աւարով լեցուած մեծ ուրախութեան մէջ էին, իսկ մերոնք վաշերով եւ ողբերով լեցուն», կը յաւելու. «Պատերազմի յաղթութենէն վերջը՝ թշնամիները գերին ու աւարը առնելով՝ մըտան իրենց աշխարհը»⁽⁶⁰⁾: Իբրեւհիմնալ հասնելով Խորասան, իր կալանաւորը՝ Լիպարիտ Օրբէլեանը ներկայացուց սուրբան Տուղրիլ բէկին. «Իբրեւ մեծ բան մը եւ ամէն գերիներէն աւելի անոր հաճելի, եւ զոր նա շնորհակալութեամբ ընդունեցաւ»⁽⁶¹⁾: Վասնզի «Սուլթանը յառաջագոյն անոր անունը լսած էր, եւ անոր ամէն քաջութիւնները գիտէր»⁽⁶²⁾: Ըստ Ուսուցիչին, Վրացի իշխանը Սուլթանին մօտ մնաց երկու տարի, տեղ տեղ դործելով քաջութիւններ: Օր մը, կ'ըսէ նոյն հեղինակը, «Սուլթան Տուղրիլի առջեւ հանեցին այլազգի խափշիկ մը, հօրը եւ քաջ մարդ, եւ Լիպարիտ իշխանը, որպէսզի իրարու դէմ պատերազմին: Լիպարիտը յաղթելով՝ խափշիկը սատկեցուց, եւ այն ատեն սուլթանը զինքը ազատեց»⁽⁶³⁾:

Սակայն՝ շատ հաւանական է, որ Լիպարիտ ազատեցաւ՝ շնորհիւ իր սրամբտութեան: Վարդան պատմիչը, — որ ոչ միայն հմուտ հեղինակ է, այլ նաեւ իր պատմած գէպերուն մէկ մասը քաղած է Հաղբատի եւ Սանահնի վանքերուն հռչակաւոր գիւանդներէն, — կ'ըսէ թէ՝ «Տուղրիլ-բէկը մարդ զրկեց Լիպարիտի, առաջարկելով որ իր հաւատքը դաւանի»: Վրաց սպարապետը պատգամաւորին ձեռքով այս պատասխանը տուաւ. «Երբ քու երեսները տեսնելու ըլլամ՝ կ'ընեմ ինչ որ

(61) Լաստիվերտցի: Անդ:

(62) Ուսուցիչ: Անդ:

(63) Անդ, էջ 127:

կը հրամայես»: Եւ Լիպարիտ ներկայանալով սուլթանին ըսաւ. «Երբ զքեզ տեսնելու արժանի եղայ՝ քու կամքդ պիտի չկատարեմ եւ մահէն ալ չեմ վախեր»: Երբ սուլթանը հարցուց անոր թէ ինչ կ'ուզէ, Լիպարիտ ըսաւ. «Եթէ վաճառական ես, ծախէ զիս, եթէ դահիճ՝ սպաննէ զիս. իսկ եթէ՝ թաղաւոր ես, պարգեւներով ազատէ զիս»: Լսելով այս խմաստուն խօսուածքները, սուլթանը ըսաւ. «Ձեմ ուզեր ո'չ ես զինքն վաճառական եւ ո'չ քու արեան դահիճ ըլլալ, այլ թաղաւոր եմ, դնա՛ ուր կ'ուզես, եւ զայն պարգեւներով արձակեց»⁽⁶⁴⁾:

Իսկ Կեղրենոս կը պատմէ, թէ Լիպարիտ Օրբէլեան շուտով ազատ արձակուեցաւ Կոստանդին Մոնոմախոս կայսեր եւ Տուղրիլ-բէկի միջեւ կնքուած համաձայնութեան մը հիման վրայ: Այս միջադէպերը ցոյց կու տան՝ թէ Սուլթան Տուղրիլը, որ, ըստ Վարդանի բացատրութեան, բոլոր աշխարհը արիւնով լեցուցեր էր»⁽⁶⁵⁾, զիտէր զնահատել ոսոխին առնական քաջութիւնը, եւ ցոյց տալ, պարագաներու համաձայն, ասպետական վեհանձնութիւն, որմէ զուրկ չէին ուրիշ արեւելեան բռնակալները:

Մինչ Լաստիվերտցին կ'ըսէ թէ Տուղրիլ-բէկ Լիպարիտ իշխանը «մեծ պարգեւներով խաղաղութեամբ արձակեց իր աշխարհը»⁽⁶⁶⁾, անդին, Ուսուցիչին կը պատմէ թէ սուլթանը «մեծ պարգեւներով ուղարկեց զնա Հոռոմներու քով, ի Կոստանդնուպոլիս: Հոս, Մոնոմախոս տեսնելով զայն շատ ուրախացաւ, եւ մեծ պարգեւներով ուղարկեց զնա իր տունը, կնոջ եւ որդիներուն մօտ»⁽⁶⁷⁾: Իսկ Վարդան պատմիչը կ'ըսէ թէ՝ «Որովհետեւ կայսրը

(64) Վարդան. «Հաւաքումն Պատմութեան», էջ 99:

(65) Անդ, էջ 96:

(66) Անդ, էջ 59-60:


(67) Ուսուցիչ: Անդ, էջ 127:

(68) Վարդան: Անդ, էջ 99-100:

Լիպարիտը իր մօտ կ'ուզէր, սա զնաց անոր քով, եւ կայսրէն զօրքեր առնելով՝ եկաւ Վրաստան, եւ բռնելով Բաղրատ թագաւորը՝ զայն զրկեց կայսեր, եւ ինքը տիրեց բոլոր երկրին»⁽⁶⁸⁾:

Հ. ՍԱՀԱԿ ՏԵՐ-ՄՈՎՍԵՍԵԱՆ

(Շարունակելի)



ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

«ՅՈՒՇԵՐՍ»

ԱՆԱՅԻՍԻ (ՏԻԿ. ԵԻՓԻՄԷ ԱԻԵՏԻՍԵԱՆ)

Պոլսի յուշամատեն մը, գրի առնուած վաւերական քերթողութի մը կողմէ, որ բողոքած է բեզու շրջանի մը և բարեբախտաբար դեռ կ'ապրի մեր մէջ: Կ'երեւակայէք այն առիթնորդ հմայքը, որ կը ներկայացնէ նման երկ մը, սկսեալ ութսունական թուականներէն մինչեւ մեր օրերը:

Տարօրինակ անձկութեամբ մը կը բանամ յուշամատենը, խամրած տերեւներ կը յուսամ գտնել հնաբոյր էջերուն մէջ, բայց ահա «սիւրուած դէմքի մը աղուոր» պատկերը կը վերաւորուած դէմքի մը աղուոր» պատկերը կը վերաւորուած դէմքի մը աղուոր» պատկերը կը վերաւորուած դէմքի մը աղուոր» պատկերը կը վերաւորուած դէմքի մը աղուոր»:

Երջանիկ դարաշրջան, երբ մէկը միւսէն աւելի հոյակապ դէմքեր կը լուսազարդէին հայ գեղեցիկ դպրութեանց երկնակամարը, որոնց յիշատակը յանկարծ կը վերապրի «հին, մոռցուած երգի մը յանկերգին» պէս:

Չգալուն քերթողութի մը հոգիի պրիմալէն է որ կը ցոլանայ լուսեղէն պատկերը անցեալ դարու պաշտելի դէմքերուն և կը բաղկէ մեր սրտին դռները:

Թովմաս Թերզեան... քնքոյշ, վսեմ, լուսամիտ, այն որ հիանալի լուսատեսութեամբ մը լուսնին ցոլքերը կ'ընդհարէր տիղմին մէջ... Ինք կ'ըլլար առաջինը, որ կը խրախուսէր մատղաջ բանաստեղծներին, կ'առաջնորդէր իր